

# Անուշ Վահանի Հակոբյան

**Ծննդյան տարեթիվ, ամսաթիվ, ծննդավայր**

1994թ. մարտի 3, ք. Երևան

**Կրթություն**

2016-2019 թթ.՝ Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի և քաղականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտուրա

2014-2016 թթ.՝ Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի և քաղականության ինստիտուտի մագիստրատուրա (գերազանցության դիպլոմ)՝ «Քրեական իրավունք, քրեաբանություն, քրեակատարողական իրավունք» մասնագիտացում (ավարտել է գերազանցությամբ)

2010-2014 թթ.՝ Հայ-Ռուսական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատ (ավարտել է գերազանցությամբ)

**Գիտական աստիճան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու, ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»

**Ատենախոսության թեման**

«Կաշառակերության դեմ պայքարում խրախուսման նորմերի քրեաիրավական նշանակությունը (համեմատական իրավական վերլուծություն)»

**Աշխատանքային փորձ**

**2025 թվականից առայսօր**՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության իրավական հարցերով փորձագետ

**2019-2025 թթ.**՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության իրավաբան

**2019 թվականից առայսօր**՝ Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս

**2018-2019 թթ.**՝ Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի տնօրենի օգնական

**2016-2018 թթ.**՝ «Գրիգորյան Ի.Թ.» փաստաբանական գրասենյակի փաստաբանի օգնական

**Մասնագիտական զարգացման ծրագրեր**

**2023 թ. Վարշավա**, Արևելյան գործընկերության և Եվրոպայի տարածաշրջանային բազմաշահառու աշխատաժողով՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի (AML/CFT) հարցերով

**2022 թ. Երևան**, ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի իրականացման գործընթացում շահակիցների ներգրավման վերաբերյալ դասընթաց, ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (UNODC)

**2021 թ. Բեռլին**, «Քաղաքացիական հասարակության համար կոռուպցիայի ախտորոշում և հակազդման պլանավորում» դասընթաց, Բեռլինի Հերթի կառավարման դպրոց

**2020 թ. Երևան**, Եվրոպայի խորհրդի իրավաբան մասնագետների համար մարդու իրավունքների ուսուցման (HELP) ծրագրի դասընթացավարների վերապատրաստում, դասընթացավարի հավաստագիր

**2019 թ. Կիև**, Ուկրաինայում հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ փորձի փոխանակման սեմինար

**2019 թ. Բեռլին**, Համաշխարհային հակակոռուպցիոն կոնսորցիումի (Global Anti-Corruption Consortium) վերապատրաստման ծրագիր, Թրանսփարենսի Ինթերնեշնլ

**2019 թ. Վիլնյուս**, «Թրանսփարենսի Ինթերնեշնլի բարեվարքության միջազգային դպրոց»

**2019 թ. Պրահա**, «Պաշտոնեական կոռուպցիայի քննություն և քրեական հետապնդում» դասընթաց, ՍԻԻԼԻ ինստիտուտ

**2018 թ. Բեռլին,** Հումբոլդտի համալսարան, «Անվտանգություն, թե՞ ազատություն: Պետության լիազորությունների ընդլայնումը հանրային եւ քրեական իրավունքում»

**2017 թ. Թյուբինգեն**, Ակադեմիական գրագրության դոկտորական աշխատաժողով

**Այլ տեղեկություններ**

2019 թվականից առայսօր ներգրավված է հակակոռուպցիոն քաղաքականությունների մշակման, օրենսդրական վերլուծությունների, հանրային մասնակցության և քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված ծրագրերում:

Իրականացնում է հակակոռուպցիոն բարեփոխումների, քաղաքացիական տարածքի, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և քրեական արդարադատության ոլորտների հետազոտություններ և փորձագիտական գնահատումներ:

Դասավանդում է մի շարք առարկաներ, այդ թվում՝ «Կոռուպցիոն հանցագործությունները տնտեսական ոլորտում», «Քրեաբանություն», «Քրեական իրավունք», «Ատելության հանցագործություններ և ատելության խոսք» դասընթացները:

**2018 թ.**, ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2018» ծրագրի շահառու

**2022-2024 թթ.**, ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2022» ծրագրի շահառու, գիտական խմբի ղեկավար

**Գիտահետազոտական և ծրագրային գործունեություն**

Հեղինակ և համահեղինակ է հակակոռուպցիոն քաղաքականության, քաղաքացիական հասարակության զարգացման, հանրային մասնակցության և իրավունքի գերակայության ոլորտներին վերաբերող մի շարք հետազոտությունների և զեկույցների, այդ թվում՝

- «ՀՀ դատախազության գործունեության գնահատում» (2026),
- «Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատում» (2025),
- Հայաստանի առաջընթացը Կայուն զարգացման նպատակ 16-ի (SDG 16) իրականացման ուղղությամբ (2019–2023),
- ՔՀԿ Չափիչ. Հայաստանի զեկույցներ (2019–2025),
- ՏՀՉԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի հինգերորդ մոնիթորինգի Հայաստանի առաջընթացի զեկույց (2023),
- «Հակակոռուպցիոն ակադեմիա» դասընթացի ծրագիր, «Հակակոռուպցիոն ակադեմիա» գործնական առաջադրանքների ժողովածու (2022),
- «Թափանցիկություն և քաղաքացիական մասնակցություն» ձեռնարկ (2020):

**Հրապարակումներ**

Հեղինակ և համահեղինակ է 3 մասնագիտական ձեռնարկների, երկու տասնյակից ավելի գիտական հոդվածների, որոնք հրապարակվել են ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի և SCOPUS ․ գիտաչափական շտեմարաններում ընդգրկված գրախոսվող գիտական պարբերականներում:

**Օտար լեզուների իմացություն**

Անգլերեն - գերազանց, ռուսերեն - գերազանց

**Ընտանեկան դրություն**

Ամուսնացած է, ունի մեկ որդի: